ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«___» _____ 2025 թ. N __-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 02-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի՝ «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները» N 02-Ն որոշման Հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները» բառերը որոշման ամբողջ տեքստում փոխարինել «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները» բառերով։

3) Հավելվածի 11-րդ կետի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել։

4) Հավելվածի 22-րդ կետի «Մրցույթին համատեղ գործունեության կարգով մասնակցության դեպքում մրցութային առաջարկի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր կողմերի որակավորումները միասին։» նախադասությունը ուժը կորցրած ճանաչել։

5) Հավելվածի 40-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել։

6) Հավելվածի 50-րդ կետի առաջին նախադասության՝ «բացման» բառից հետո հանել «և գնահատման» բառերը, ինչպես նաև «նիստերում» բառը փոխարինել «նիստում» բառով։

7) Հավելվածի Գլուխ 7-ի վերնագրից հանել «, գնահատման» կետադրական նշանը և բառը։

8) Հավելվածի 50-րդ կետի երկրորդ նախադասության «կայացնում էի» բառերը փոխարինել «կայացնում է» բառերով, ինչպես նաև «հետաձգվում» բառից հետո լրացնել «է» բառը։

9) Հավելվածի 51-րդ կետի երկրորդ նախադասության «վերադարձման» բառը փոխարինել «վերադարձի» բառով։

10) Հավելվածի 54-րդ, 56-60-րդ, 63-րդ, 66-րդ կետերո ուժը կորցրած ճանաչել։

11) Հավելվածի 62-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Մրցութային հանձնաժողովի կողմից որպես մրցույթի հրապարակային վիճակահանության փուլին մասնակցության իրավունք ստացող կազմակերպություններ ընտրվում են այն կազմակերպությունները, որոնց կողմից ներկայացված տեղեկությունները համապատասխանում են սույն Կարգի 3-րդ Գլխով սահմանված պահանջներին։»։

12) Հավելվածի 65-րդ կետի «մասնակիցը» բառից հետո հանել «գնահատման փուլից հետո» բառերը։

13) Հավելվածի 68-րդ կետի «աուդիտորական կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «, կուսակցությունների» կետադրական նշանը և բառը։

14) Հավելվածի 74-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 74.1-ին կետ.

«74.1. Եթե վիճակահանության արդյունքում որևէ աուդիտորական կազմակերպություն վերջնական հաղթող է ճանաչվել հայտարարված մրցույթների կեսից ավելիի դեպքում, ապա տվյալ կազմակերպության անվանումը հանվում է հետագա վիճակահանությունների մասնակիցների ցանկից։»։

15) 75-րդ կետում «72-74-րդ» բառերը փոխարինել «72-74.1» բառերով։

16) Հավելվածի 83-րդ կետի «պայմանագրի կնքման ամսաթվի, պայմանագրի գնի և մրցութային առաջարկների գնահատման արդյունքում ստացված միավորների մասին» բառերը փոխարինել «պայմանագրի կնքման ամսաթվի և պայմանագրի գնի մասին» բառերով։

17) Հավելվածի 91-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել։

18) Հավելվածի 99-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել։

19) Հավելվածի ՁԼ 1-ի

ա) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, և նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով։»,

բ) Հինգերորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել։

20) Հավելվածի Ձև 3-ը և Ձև 4-ը ուժը կորցրած ճանաչել։

21) Հավելվածի Ձև 5-ի 7.6-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«7.6 Ընդ որում, սույն ենթակետով սահմանված դեպքում պայմանագրում կատարվող փոփոխությունների և լրացումների առնչությամբ կիրառելի են սույն պայմանագրի 7.4-րդ կետի դրույթները։»:

22) Հավելվածի՝ «Արձանագրություն պայմանագրի արդյունքների հանձնման-ընդունման» ձևանմուշից հանել «Պայմանագրի համարը՝ ————» բառերը,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Մ. ԳԱԼՍՏՅԱՆ